«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ

# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 99

«24» 02 2025թ. ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի
ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման ընթացակարգը:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ _____
(ստորագրություն)

Քարտուղար՝ ԴԱՎԻԹ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ _____
(ստորագրություն)

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ

---

ՀՐԱՄԱՆ N 32/

«26» 02 2025թ. գ. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման ընթացակարգը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ _____

(ստորագրություն)

Հաստատված է

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի

2025թ. «[illegible]» [illegible] N 326 հրամանով

## Ընթացակարգի նշանակությունը և կիրառման ոլորտը

Սույն ընթացակարգը որոշում է ԳՊՔ-ի առաջընթացի ապահովման միասնական կարգը և բխում է դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունից: Սույն ընթացակարգը ուղղված է դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման պահանջների իրականացմանը:

Ընթացակարգում սահմանված պահանջները պարտադիր են քոլեջի ղեկավար կազմի, համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, դասավանդողների կողմից կիրառման համար:

## Ընդհանուր դրույթներ

Մասնագիտական առաջընթացի ապահովման շրջանակներում կարող են կիրառվել հետևյալ ձևերը՝

- Մասնակցություն կոնֆերանսների, սեմինարների, թրեյնինգների և այլ միջոցառումների,
- Մասնակցություն մասնագիտական վերապատրաստումների,
- Կառավարչական անձնակազմի վերապատրաստումներ:

Մասնագիտական առաջընթացի ապահովումը պետք է հասանելի լինի յուրաքանչյուր աշխատակցին՝ արդարության սկզբունքին համապատասխան և պետք է նպաստի անձի ու քոլեջի զարգացմանը:

## Նպատակը և խնդիրները

Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման **նպատակն** է՝ անձնակազմի՝ համապատասխան օրենքների, ԳՊՔ կանոնադրության, ներքին իրավական փաստաթղթերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը, մասնագիտական զարգացումն ու կատարելագործումը, մասնագիտական գործունեության ընթացքում նոր, ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների յուրացումը և կիրառումը:

**Խնդիրները՝**

- Դասախոսական անձնակազմի մասնագիտական առաջընթացի աջակցում քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից:
- Մասնագիտական առաջընթացի ապահովման համակարգի ձևավորումը և կատարելագործումը:
- Մասնագիտակյան առաջընթացի ապահովման և աջակցման մեխանիզմների մշակումը և գործածումը:

## Ընթացակարգի նկարագրություն

Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի զարգացումը որոշվում է՝

- Աշխատակցի ընդունման ժամանակ,
- Աշխատակցի աշխատանքի առաջխաղացման ժամանակ,
- Մասնագիտական վերապատրաստումների պահանջի ուսումնասիրման ժամանակ:

Աշխատակիցները իրավունք ունեն մասնակցել մասնագիտական առաջընթացի ապահովման միջոցառումներին (վերապատարստում, փորձի փոխանակում, կրթություն)՝ կախված իրենց աշխատանքային դիրքից և կարիերայի զարգացման միտումներից:

Դասախոսական կազմի մասնագիտական ունակությունները բացահայտվում են նրանց գործունեության մշտադիտարկման, հետադարձ կապի մեխանիզմների միջոցով:

Դասախոսական կազմի մասնագիտական կարիքների բացահայտումը իրականացվում է